

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» օգոստոսի 2021թ

N 10-Ա

Ք. Ստեփանակերտ

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ՝ ԱՌ 14.05.2021թ. N 4-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի մայիսի 14-ի N 4-Ա որոշմամբ հաստատված «Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված ծրագրերի իրագործման նպատակով անտոկոս փոխառությունների տրամադրման» կարգի 43-րդ կետը՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

1.«Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ առ 14.05.2021թ. 4-Ա որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Փոխառությունը տրամադրվում է առավելագույնը 10 /տասը/ տարի մարման ժամկետով՝ կախված շահառուի տարիքից, կարգավիճակից, փոխառության գումարի և շահառուի եկամուտների չափից: Փոխառության մարման վերջնաժամկետը չի կարող գերազանցել շահառուի՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված առավելագույն տարիքը: Մասնավոր դեպքերում մարման առավելագույն ժամկետը կարող է երկարացվել՝ սույն կարգի 9-րդ կետի համաձայն: Մարման առավելագույն ժամկետը հնարավոր է սահմանել 18 մլն ՀՀ դրամ և ավելի գումար պահանջող բիզնես ծրագրերի համար: Մնացյալ դեպքերում մարման ժամկետը կախված է ծրագրի իրագործման համար անհրաժեշտ գումարից և ծրագրից ակնկալվող եկամտից:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներին պատկանող, ինչպես նաև շահույթ չհետապնդող և պետական ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է բարեգործական հիմունքներով:».

2) 18-րդ կետում «25.000 /քսանհինգ հազար/ բառերը փոխարինել 20.000 /քսան հազար/ բառերով:».

3) 28-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Գումարի ֆինանսավորման 51-85%-ի դեպքում ծրագրի վերջնաժամկետը երկարաձգվում է ևս 15 /տասնհինգ/ օրացուցային օրով: Այս ընթացքում հիմնադրամը կդիմի տվյալ ծրագրին աջակցություն տրամադրած մասնակիցներին՝ առաջարկելով համալրել գումարը, քանի որ նրանք արդեն իսկ հետաքրքրված էին տվյալ ծրագրի իրագործմամբ, ինչպես նաև տվյալ ոլորտի համապատասխան պետական կառույցներին՝ պետական բյուջեից ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով: Այնուամենայնիվ, գումարի չհավաքագրման դեպքում մինչ այդ հավաքված գումարը կվերաբաշխվի այլ ծրագրերի միջև:».

4) 39-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 39.1-ին կետ.
«39.1. Վերոնշյալ պայմանի իրականացման արդյունքում ըստ մարման գրաֆիկի ամենամսյա հավաքագրված գումարներից ձևավորված ֆոնդի միջոցները հիմնադրամը օգտագործում է հետևյալ ուղղություններով՝

1) 85%-ը կուղղվի այլ ծրագրերի ֆինանսավորմանը,

- 2) 15%-ը կուղղվի հիմանդրամի ծախսերին, որը հանդիսանում է ծրագրերի իրականացման վերահսկողության վճար՝ իր մեջ ներառելով փորձագետների ներգրավում և պարբերական մոնիթորինգ:».
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ռ.ՀՅՈՒՍԵՆՈՒՆՑ